ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ --665-Ա--- « 09 » փետրվարի 2026թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ Հ.5Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք են հանդիսացել «Զեյթուն Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի դիմումը՝ Խանջյան փողոց 1-ին նրբանցք հ.5ա հասցեում, վարձակալության իրավունքով ընկերությանը պատկանող (ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 22-ի հ.332-Ն որոշումով տարածքի նկատմամբ ճանաչվել է բացառիկ գերակա հանրային շահ, որի ձեռքբերող է ճանաչվել ընկերությունը) 37.2քմ մակերեսով հողաման ուղղակի վաճառքի ձևով օտարելու (մասնավորեցնելու) վերաբերյալ, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.01042021-01-0352 վկայականը, ՀՀ կառավարության 22.03.2018թ. հ.332-Ն որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի 08/07/2025թ. հ.Կ-08072025-01-0204 տեղեկանքը, ինչպես նաև 23.06.2025թ. Երևանի քաղաքապետի կողմից տրված հ. 01/79717-25 տեղեկանքը:

Քննարկվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 37.2քմ, որն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սափմանափակումների ցանկում և համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 2-րդ գոտում:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ 37.2քմ մակերեսով հողամասը /հողամասի ծածկագիրը (01-006-211-099) հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 23-ի N 426-Ն որոշմամբ, տող՝ 59/ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գոտում է:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի հ.332-Ն որոշումով, հաշվի առնելով «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի եզրակացությունը.

1. Երևան քաղաքի Խանջյան փողոց 1-ին նրբանցք հ.5ա հասցեում գտնվող 37.2քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել (վաճառել) «Զեյթուն

Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին՝ տարածագնահատման 2-րդ գոտու կադաստրային արժեքով, որը կազմում է 7 979 400.00 (յոթ միլիոն ինը հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ և փոխանցել 900015211320 հաշվեհամարին (հողի օտարումից եկամուտներ):

2.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, ընկերության հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:

3. Ընդունել ի գիտություն, որ հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումից բխող բոլոր գույքային իրավունքների պետական գրանցման, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ անհրաժեշտ վճարումներն իրականացվում են «Զեյթուն Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի միջոցների հաշվին:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

7. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ